«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ «Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում»

Հաստատություն ՝ N 45 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Արև Տոնոյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն……2

2. Կերպարվեստային գործունեություն

Ավանդական և ոչ ավանդական նկարչություն…….……..4

3. Գեղագիտական զարգացնող միջավայրի ապահովում……...10

4. Ոչ ավանդական նկարչություն հոգեկանի զարգացման գործընթացում……..13

5. Ավանդական և ոչ ավանդական նկարչության զարգացումը նախադպրոցականի դաստիարակության հայեցակարգի համատեքստում……...….16

6. Խաղ-պարապմունք……20

7. Եզրակացություն……21

8. Գրականության ցանկ……....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Միջավայրը երեխային ընտրելու և ինքնուրույն գործելու հնարավորություն պետք է ընձեռի։ Այդ դեպքում երեխան ղեկավարվում է ուժեղ ներքին ազդակներով։ Ընտրելով գործունեության որոշակի ձև՝ նա բավարարում է իր զարգացման ներքին պահանջմունքը։ Ինքնուրույն ընտրելով գործունեությունը՝ երեխան երկար ժամանակ մնում է հետաքրքրված և պահպանվում է դրդապատճառը»։

Մ. Մոնտեսորի

Երեխայի ստեղծագործելը առաջին տեղում պետք է լինի՝ անկախ նրա գործունեության ձևից՝ նկարչություն, երաժշտություն, խաղ, մարզանք և այլն։

Երբ երեխան ինքն է ընտրում, թե գործունեության որ տեսակով զբաղվի, պահպանվում է հետաքրքրությունը, երեխան հնարում, հետաքրքիր լուծումներ է փնտրում և գտնում։ Անգիտակցաբար գործի են դրվում հոգեկան մի շարք գործընթացներ՝ ստեղծագործական երևակայություն, ուշադրություն, հիշողություն, ստեղծագործական մտածողություն, խոսքի կենտրոնները և այլն։

Նախադպրոցականի առաջատար գործունեությունը խաղն է։ Խաղը երեխաների ճանաչողական հնարավորության ընդլայնման էական գործոն է։ Խաղի մեջ երեխան շատ անմիջական ու անկեղծ է, ապրում է իր ստեղծած կերպարի գործողություններով ու հույզերով։ Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հարստացմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը։

Նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը։ Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը։ Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխայի աշխարհընկալումը։

Այլընտրանքային նկարչությունը կերպարվեստային գործունեության տեսակ է, որը չունի մտքի սահմաններ և արգելքներ, ունի նկարչական իր մոտեցումները՝ «գործիքները»։ Նկարչության գործիք կարող է ծառայել շրջապատում ցանկացած իր։ Կերպարվեստային այս գործունեությունը լայն հնարավորություն է ստեղծում

ինքնարտահայտման, նախաձեռնողականության համար, միաժամանակ հոգեբանական լարվածության վերացման համար։ Այսինքն՝ ունի թերապևտիկ նշանակություն։

Ժամանակակից մանկավարժությունն իր անհատակողմնորոշիչ դիրքորոշումներով ուղղված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը։ Հասարակությանը միշտ էլ անհրաժեշտ են լինելու ստեղծագործական մտածողության անհատականություններ։

«Աշխարհը կարելի է ճանաչել երկու ճանապարհով՝ գիտության և արվեստի»

(Վ. Գ. Բելինսկի)

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կերպարվեստային գործունեությունը կարևոր նշանակություն ունի գեղագիտական, գեղարվեստական դաստիրակության գործընթացում։

Զբաղվելով կերպարվեստային գործունեությամբ՝ երեխաները հնարավորություն ունեն գեղարվեստական ստեղծագործություններով արտահայտելու իրենց ըմբռնումները, հուզական վերաբերմունքը շրջական առարկաների և երևույթների նկատմամբ։

Կերպարվեստային պարապմունքների նպատակն է զարգացնել երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, ձևավորել գեղագիտական ճաշակ։

Կերպարվեստային պարապմունքների միջոցով լուծվում են հետևյալ խնդիրները.

- զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու, համեմատություններ և վերլուծություններ կատարելու, նմանությունները ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը
- հարստացնել զգայական փորձը՝ տեսողական, լսողական, շոշափելիքի զգացողությունը
- սովորեցնել դիտել, զգալ շրջապատող աշխարհը, բարենպաստ պայմաններ ստեղծել երեխայի գեղագիտական զգացողության զարգացման համար
- ծանոթացնել լայնության, բարձրության, մեծության հասկացություններին
- ձևավորել առարկայի ձևը, գույնը տեսնելու, զգալու և վերարտադրելու կարողություն
- կարողանալ նկարելով բացահայտել առարակաների հարաբերությունները միմյանց նկատմամբ

Կերպարվեստային գործունեության տեսակներն են.

- նկարչություն
- ծեփակերտում
- ապլիկացիա
- կառուցողական աշխատանք

«Նկարչությունը ինքնատիպ մանկական խոսք է»:

Գ. Վիգոտսկի

Նկարչությունը գծելու, նկարելու միջոցով առարկաների և երևույթների պատկերումն է, որի հիմքն է կազմում երանգավորումը, ձևը և կոմպոզիցիան: Ձննելով առարկան՝ երեխաները պետք է կարողանան նկարի մեջ պատկերել դրա բնորոշ հատկությունները, ստեղծեն գեղարվեստական կերպար, արտացոլել սյուժե, սովորել նախշերի մի քանի տարրեր՝ աստիճանաբար ձեռք բերելով նկարելու տեխնիկայի հմտությունները:

Կերպարվեստային պարապմունքների առջև դրված խնդիրները կարելի է իրականացնել նաև ոչ ավանդական նկարչության տեխնիկաների միջոցով:

Ոչ ավանդական նկարչության գործընթացում շարունակվում է ուսուցողական և ճանաչողական գործընթացներ:

Ոչ ավանդական նկարչությունն այլ մոտեցում է պահանջում: Այստեղ լավագույնս կարող է դրսևորել երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական միտքը:

Ի տարբերություն ավանդական նկարչության՝ ոչ ավանդական նկարչության «գործիք» կարող է ծառայել մեր շրջապատում՝ կենցաղում, բակում, ցանկացած իր՝ և՛ ձեռքի ափը, և՛ թելը, և՛ բամբակե ձողը, և՛ ճյուղը, և՛ այսպես շարունակ, իսկ որպես նյութ կարող է ծառայել թե՛ ջրաներկը, թե՛ կավիճը, թե՛ աղը, թե՛ բամբակը, և թե՛ ձվի կեղևը:

Այստեղ մարդու մտքի թռիչքը կարող է անսահմանափակ լինել: Երեխային տալով ազատություն, ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, իհարկե համապատասխան մթնոլորտ ստեղծելով՝ կնպաստենք նրա ստեղծագործական «գյուտերի» ստեղծմանը:

Այսպիսով, ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչությունը ենթադրում է պարագաների, նյութերի այլընտրանքային, ոչ ընդունված ձևով օգտագործում:

Ոչ ավանդական նկարչության տեսակներն են.

- **Հարթ մակերեսով նկարչություն**
- **Անհարթ մակերեսով նկարչություն**
- **Տարբեր միջոցներով նկարչություն**

Հարթ մակերեսով նկարչության օրինակներ են՝

- **ներկակաթիլներով նկարչություն,**
- **դրոշմով նկարչություն**
- **մատնանկարչություն** և այլն:

Մատնանկարչությունը սպիտակ թղթի վրա գունաներկված ձեռքերի միջոցով կատարվող նկարչությունն է: Այս տիպի նկարչությամբ զբաղվելու ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը: Նա կարող է նկարել աջ կամ ձախ ձեռքով, երկու ձեռքերով, ձեռքի ափով, մատներով: Այս տիպի աշխատանքի նպատակն է զարգացնել հետաքրքրասիրություն մատիկների և ներկերի միջոցով ստեղծվող պատկերների նկատմամբ:

Ձեռքերով, մատիկներով, ափի միջոցով նկարելը կարելի է համարել ոչ ավանդական նկարչության ձևերից մեկը, որի շնորհիվ կարելի է յուրովի վերարտադրել առարակների, երևույթների պատկերները՝ գործի դնելով վառ երևակայությունը:

Ըստ հետազոտողների (Տ. Գ. Կազակովա, Գ. Գ. Գրիգորևա)՝ ձեռքով նկարելու գործելակերպը, ի տարբերություն վրձնով նկարելու, երեխաներին ընձեռում է լայն հնարավորություն: Գունաներկված մատիկներով նկարելու ընթացքում երեխան մեծ ոգևորություն է ապրում, ուրախություն, հրճվանք:

Նա ազատ է իր շարժումների, ստացվող պատկերների, հարվածների, քսվածքների, գծերի ուղղությունների ընտրության մեջ: Մատնանկարչությունը նպաստում է բոլոր զգայարանների ակտիվացմանը, երեխան շոշափում է, փորձում է հոտ քաշել ներկից, զգում է ներկանյութը, դրա գույնը, փափկությունը:

Հետևաբար, շատ կարևոր է, որ երեխային հնարավորություն տրվի դեռ վաղ տարիքից աշխատել նման տեխնիկայով. մատնանկարչությունում շատ կարևոր է նկարելու մեթոդիկայի իմացումը:

Նկարչության գաղտնիքները բացահայտելու համար այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է սկսել դեռ վաղ տարիքից: Սկզբում երեխան պետք է աշխատի

վառ գույներով, քանի որ այն օգնում է ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, ուրախ, տաք գույներով առարակների նկատմամբ: Առաջին երեք պարապմունքներին պետք է աշխատի գունավորված մատիկներով: Դա կարելի է համարել փորձնական խաղ-պարապմունք, որտեղ երեխան ազատ է իր շարժումների մեջ:

3-5-րդ պարապմունքների ընթացքում երեխան արդեն ինքնուրույն ընտրում է իրեն ծանոթ գույները (կարմիր, կապույտ, դեղին, ինչպես նաև՝ կանաչ, նարնջագույն) և մատներով նկարում: Սկզբնական շրջանում պարապմունքները պետք է կազմակերպել անհատական, երբ յուրաքանչյուր երեխա կտիրապետի այս աշխատելաձևին, կարելի է կազմակերպել պարապմունքներ զույգերով, այնուհետև՝ խմբերով: Դաստիարակը բացատրում է, ցուցադրում է ներկից օգտվելու ճիշտ ձևը՝ այն պետք է լինի ոչ մեծ քանակությամբ և զգուշությամբ դրվելու է թղթի վրա: Մի քանի գույն է տեղադրվում սեղանի վրա, երեխան գունավոր մատիկներով սպիտակ թղթի վրա կատարում է հարվածներ, հպումներ: Երեխան կարող է աշխատել և՛ աջ, և՛ ձախ ձեռքով: Դաստիարակաը վերահսկում է, բայց չի միջամտում, անհրաժեշտության դեպքում կարող է ուղղորդել:

Երեխան մեծ խանդավառություն, ուրախություն է ապրում գունավորված մատիկներով աշխատելու ընթացքում: Նա կարող է նկարել աջից, ձախից, վերևից ներքև, կենտրոնից եզր, տանել ուղիղ գծեր և խզբզանքներ անել: Աշխատելու ընթացքում երեխաները հայտնաբերում են, որ թուղթն ունի եզրեր, և չպետք է դուրս գալ այդ եզրերից: Այս գործունեության ընթացքում, թեկուզև երեխան միայն հորիզոնական գծեր է տարել, միևնույն է նա ունենում է դրական հույզեր, իսկ աշխատանքի վերջում իրեն բավարարված է զգում, որը խիստ կարևոր հանգամանք է:

Այսպիսի աշխատանքը կարող է տևել 3-4-ից մինչև 10-12 րոպե: Երեխային հետաքրքրում է ոչ միայն աշխատանքի ընթացքը, այլև վերջնական տեսքը և մեծահասակի խրախուսական խոսքը: Ինչպիսին էլ լինի նկարը, միևնույն է այն երեխայի զգայական ընկալման վերարտադրումն է:

Մատնանկարչության համար անհրաժեշտ են առանձնահատուկ պայմաններ և նյութեր.

- աշխատատեղ
- աշխատանքային հագուստ (գոգնոց)

- թուղթ՝ տարբեր չափերի
- խոնավ լաթեր
- գուաշ, ջրաներկ

Ներկանյութերը կարող են լինել սննդային կամ բնական (գազարի, բազուկի հյութից պատրաստված)։ Ինչպես նաև “Non foxik” գուաշներ։

Մատնանկարչությունը թույլ է տալիս.

- արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ
- զարգացնել ձեռքի մանր մկանները
- հղկել ձեռքի շարժումները։

Անհարթ մակերեսով նկարչության օրինակներ են նկարչություն ձվի կճեպով, աղով նկարչություն, նկարչություն բամբակով, նաև ավազով և այլն։

Դիտարկենք աղով նկարչությունը։

Աղով նկարչությունը բավականին հետաքրքրիր աշխատանք է։ Աղով աշխատելու ընթացքում երեխաները ծանոթանում են մանր և խոշոր աղի հատկություններին, խթանվում է հետաքրքրասիրությունը, երևակայությունը, սովորում է թղթի վրա աղը հավասարաչափ լցնել, բամբակով կամ վրձնով գունավորելու, գունաներկով կոկիկ աշխատելու ձևերը։ Զարգանում է ուշադրության, կոկին և համբերատար աշխատելու կարողություն։

Աղով աշխատելու համար անհրաժեշտ են հետևյալ նյութերն ու միջոցները.

- ալբոմի կամ գունավոր թղթեր
- գուաշ
- փոքրիկ թասեր գունաներկի համար
- բամբակե բարձիկներ կամ վրձիններ
- աղամաններ
- սրվակով սոսինձ
- անձեռոցիկներ
- նմուշ-օրինակներ

Խոշոր աղով աշխատելու համար օգտագործում ենք սոսինձ (ցանկալի է սրվակով սոսինձ)։ Եթե նախընտրած պատկերը ուրվագծային է, ապա սոսինձով զգուշորեն «գծել» ուրվագիծը, այնուհետև պլաստմասե գդալի կամ սրվակի օգնությամբ լցվել ուրվագծի վրա և թողնել չորանա։ Չորանալուց հետո զգուշորեն թեքել, որպեսզի ավելորդ աղը թափվի, ապա գունավորել վրձնով կամ բամբակյա բարձիկով։ Աղը գունավորում են ոչ համաչափ, որի հետևանքով թղթի վրա ստացվում են փայփլուն հետաքրքիր պատկերներ։

Խորհուրդ է տրվում մանար աղով աշխատանքները գունավորելու համար օգտագործել բարձիկներ, իսկ խոշոր աղով՝ վրձին։ Աշխատանքի այս տեխնիկայով կարելի է պատկերել խոշոր աղով ձմեռային տեսարաններ՝ ձնակույտ, ձյունիկներ և այլն, իսկ մանր աղով՝ ամպեր, ալիքներ, ծուխ, ձյուն և այլն։

Տպավորությունները կարելի է ամրապնդել հարցերի միջոցով.

- Ի՞նչ կատարվեց խոշոր աղի հետ։
- Ի՞նչ կատարվեց մանր աղի հետ։
- Ինչպիսի՞ն է ստացված պատկերը։

Տարբեր միջոցներով նկարչություն

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչներից է գեղագիտական դաստիարակությունը։

Նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորմանը։ Գեղագիտական ճաշակն արդյունք է գեղագիտական դաստիարակության ընթացքում ձևավորվող գեղագիտական գիտակցության և իրենից ներկայացնում է որոշակի սուբյեկտիվ վերաբերմունք գեղեցիկի նկատմամբ։ Գեղեցիկի նկատմամբ վերաբերմունքը դրսևորվում է երեխայի գործունեության տարբեր ձևերում գեղաֆիտա-գեղարվեստական ընդունակություններով և կարողություններով։

Գեղագիտական դաստիարակության հիմնական մանկավարժական պայմանը արվեստի ստեղծագործություններով հարուստ, գեղագիտական միջավայրի, կենցաղի գեղագիտության ապահովումն է։

Հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմի հետ։ Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկություն-պահանջմունքի զարգացմանը։

Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է։ Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը։

Գեղագիտական դաստիարակության գործընթացը արդյունավետ է երեխայի ակտիվ մասնակցության պայմաններում։ Նախադպրոցականը գեղագիտական դաստիարակության գործընթացի սուբյեկտ է, նա շրջապատի գեղեցիկը ընկալելու և վերարտադրելու ընթացքում ունի ակտիվ դիրքորոշում և փորձում է ոչ միայն արտացոլել գեղեցիկի իր պատկերացումները, այլև ստեղծագործաբար վերափոխել և ներկայացնել դրանք ցանկալի տարբերակով։

Գեղեցիկի դրսևորման հիմնական ձևը նախադպրոցական տարիքում երեխայի ինքնուրույն գեղարվեստական գործունեությունն է։

Հզոր է արվեստի ներգործությունը գեղագիտական դաստիարակության գործընթացում։

Արվեստի հետ հաղորդակցումը սովորեցնում է երեխային տեսնել իրական կյանքի գեղեցկությունը, տարբերել գեղեցիկը տգեղից և ընտրովի վերաբերվել կյանքի բազմազանությանն ու բազմերանգությանը։ Արվեստի դրական ներգործության արդյունքում ձևավորվում է գեղագիտական վերբերմունք սեփական կյանքի և արտաքին աշխարհի հանդեպ։

Գեղարվեստական գործունեությամբ ինքնուրույն զբաղվելու կարողությունը զարգանում է աստիճանաբար, անցնելով ձևավորման 3 փուլ.

- վերարտադրող գործունեության ձևավորման
- ստեղծագործական բնույթի, մեծահասակների հետ համատեղ գործունեության ձևավորման
- ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորման, որն աստիճանաբար վերածվում է ստեղծագործության։

Այսպիսով, արվեստի ստեղծագորոծություններով հագեցած միջավայրը նախադպրոցականաի գեղագիտական դաստիարակության կարևոր մանկավարժական պայման է, իսկ երեխային արվեստի բոլոր տեսակներին հաղորդակից դարձնելու կազմակերպման գործընթացը՝ գեղագիտական դաստիարակության հզոր միջոց։

Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ձևերից է կերպարվեստային գործունեությունը։

Ոչ ավանդական նկարչությունը կերպարվեստային գործունեության հզոր միջոց է երեխաների ստեղծագործական մտածողության, նախաձեռնողականության, ինքնուրույն գործունեության զարգացման համար։

Ոչ ավանդական նկարչության տեխնիկաները տարբերվում են ավանդական նկարչության տեխնիկաներից։ Երեխաները կենցաղում գտնվող ծանոթ իրերը կարող են կիրառել նաև արվեստում։ Հետևաբար, մեծահասակի խնդիրն է այստեղ վստահել երեխային, հնարավորություն տալ ստեղծագործական երևակայության զարգացման և ինքնաարտահայտման համար։

Խորհուրդ ծնողներին.

- Լինել համբերատար։

- Ստեղծել համարավետ ստեղծագործական միջավայր: Եթե երեխան ցանկանում է նկարել հատակին, պետք չէ սահմանափակել նրա ազատությունը:
- Լուսավորությունը մեծ կարևորություն ունի, աջլիկների համար լույսը ձախից պետք է լինի, ձախլիկներինը՝ աջից:
- Երեխաների հետ դիտել նկարներ, հարցեր տալ, ինչ կամ ովքեր են պատկերված նկարում, լսել երեխայի ստեղծագործական, երևակայական պատմությունը և արտահայտվել դրական:
- Այցելել ստեղծագործական կենտրոններ:



Ես՝ որպես ծնող և դաստիարակ, երեխաներիս հետ ամեն ամիս տիկնիկային թատրոններ, պատկերասրահ, ցուցահանդեսներ ենք այցելում:

Տպավորված էինք Սերգեյ Փարաջանովի աշխատանքներով: Անկրկնելի ստեղծագործական հարուստ միջավայր է, ստեղծագործական մտքի թռիչքը՝ անսահման :

ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գեղարվեստական և գեղագիտական զարգացումը մեծ նշանակություն ունի նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

Նկարելով երեխաները ոչ միայն ծանոթանում են մշակույթին, արվեստին, այլ նաև երևակայում են, փորձարկում, զարգանում է մոտորիկան, ինչն էլ իր հերթին ակտիվացնում է խոսքի կենտրոնները: Այսպիսով նկարչական գործունեության ընթացքում զարգանում են հոգեկան կարևոր գործընթացներ՝ մտածողություն, հիշողություն, խոսք:

Ախտորոշման շատ մեթոդներ հիմնված են նկարչության վրա, քանի որ այդ տեսակի գործունեության մեջ երեխան ինքնաարտահայտվում է՝ չհանդիպելով խոչընդոտների. օրինակ հաղորդակցման խոչընդոտների՝ իր վիճակը նկարագրելու համար բառեր գտնելու անկարողություն:

Ինչպես նշում է Գ. Վիգոտսկին, նկարչությունը յուրօրինակ, ինքնատիպ մանկական խոսք է: Երեխաները շատ են սիրում նկարել, նկարչությունը նրանց համար յուրահատուկ միջոց է: Երեխաները ձգտում են նկարել, դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ արտահատվելու միջոց: Այն իր բնույթով նման է խաղին, հետևաբար երեխայի համար դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի, բնականոն տարբերակ է:

Այսպիսով, ստեղծագործական գործունեությունը, անկասկած, կարևոր է երեխայի զարգացման համար, այն նաև հետաքրքիր է: Ավանդական նկարչությունից զատ կա նաև այլընտրանքային նկարչություն: Վերջինս պահանջում է այլ մոտեցում, այլ տեխնիկաներ: Բայց և այնպես ոչ ավանդական նկարչությունը լայն հնարավորություն է ստեղծում հոգեկան գործընթացների բուռն ակտիվացման և զարգացման համար: Ոչ ավանդական նկարչության տեսակ է մատնանկարչությունը: Վերջինիս միջոցով զարգանում են մոտորիկան, ստեղծագործական գործընթացները, այն նաև արթ-թերապիայի նոր ճյուղ է, օգնում է ազատվել սթրեսից, միաժամանակ ստանալ գեղեցիկ «գլուխգործոցներ»:

Անմիջականորեն շփվելով ներկանյութերի հետ՝ երեխաների մոտ ակտիվանաում են զգայարանները (շոշափելիքի, հոտառության և այլ: Երեխան շոշափում է, մոտեցնում քթին):

Ներկակաթիլներ ձողի միջոցով փչում և տարածում ենք ներկը։ Սա նաև կարող է ծառայել որպես լոգոպետական խաղ, նպաստում է խոսքա-ձայնային ապարատի զարգացմանը։

Ոչ ավանդական նկարչությունը հիանալի միջավայր է ստեղծում դրական հույզեր ստանալու համար։

Նախադպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի՝ ընկալում և զգում է ամեն մանրուք, նա ընկալում է աշխարհը տպավորությունների և կարպարների միջոցով։

Աշխարհի կերպարային ընկալման հիմքում ընկած են երեխայի բարձր հուզականութունը և երևակայության անսահման հնարավորությունները։ Հուզական և կերպարային աշխարհընկալման արդյունքում են ի հայտ գալիս և դրանց հիման վրա երեխայի ստեղծագործական ընդունակությունները։

Ի. Գ. Լերները, ուսումնասիրելով նախադպրոցականի ստեղծագործական ընդունակությունների դրսևորման եղանակները, առանձնացնում է ստեղծագործական գործունեության զարգացման 3 փուլ, որոնք բնութագրում են միաժամանակ նախադպրոցահասակ երեխայի ստեղծագործելու և՛ ընթացքը, և՛ մեխանիզմները։

I փուլ – մտահղացման ձևակերպման փուլ։ Ստեղծագործելու մտահղացումն առաջանում է աստիճանաբար կուտակվող և հարստացող հուզա-զգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպարային պատկերացումներ, դրանք ամրապնդվում են գեղագիտական փորձով, և երեխան փորձում է այդ ամենը անհապաղ որևէ կերպ վերարտադրել։

Կրտսեր նախադպրոցական տարիքում ստեղծագործելու մտահղացումն իրադրային է՝ պայմանավորված անսպասելի ակնթարթային տպավորություններով, այն արտահայտվում է հիմնականում նկարելու ցանկությամբ։

Ավագ նախադպրոցական տարիքում մտահղացումն ավելի կայուն բնույթի է, այն կարող է արտացոլվել գեղարվեստական գործունեության տարբեր ձևերում։

II փուլը, ըստ Ի. Յ. Լերների, կերպարի ստեղծման փուլն է, որի ընթացքում երեխան «կառուցում է» իր մտահղացումը։ Նշված գործընթացին բնորոշ են հետաքրքիր

լուծումներ՝ այլընտրանքային մոտեցումներ (օրինակ կապույտ խնձոր, կանաչ նարինջ), չափերի ընդգծված շեղումներ, երևակայական տարրեր, անհավանական լրացումներ (օրինակ 3 ականջավոր նապաստակ)։

III փուլը ստեղծագործության վերլուծություն փուլն է, որի ընթացքում երեխան պատրաստակամ և ամենայն պատասխանատվությամբ նկարագրում է սեփական ստեղծագորոծությունը, բացատում մտահղացման իրականացման եղնանակները։

Գեղագիտական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում պետք է ուղղված լինի երեխայի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը։

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԵԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության իրական նպատակն է հուզականորեն կայացած, արտաքին աշխարհին համարժեք արձագանքով, ներդաշնակ զարգացած երջանիկ երեխայի դաստիարակությունը։ Երջանիկ է այն նախադպրոցահասակ երեխան, ով ուրախությամբ և հաճույքով է հաղորդակցվում աշխարհի հետ, պատրաստ է համագործակցության և հնարավոր դժվարությունների հաղթահարմանը՝ կիրառելով սեփական գիտելիքներն ու հմտությունները տարաբնույթ խնդիրների լուծման ընթացքում։ Անփոխարինելի է արվեստի դերը երեխայի ներդաշնակ զարգացման գործում։ Արվեստի դերը երեխայի դաստիարակության գործընթացում առավել կարևորվում է հասարակության զարգացման անցումային շրջանում՝ սոցիալական արժեքների վերանայման և դաստիարակության ոճերի բախման պայմաններում։ Արվեստն է արտացոլում ժամանակի ոգին, մարդուն՝ իր բարդ ներաշխարհով ու բարոյական նկարագրով, միևնույն ժամանակ բացառիկ հնարավորություն տալիս վերափոխվելու, մաքրվելու և նորովի վերաբերվելու կյանքին։ Ժամանակակից մանկավարժությունն ուղղված է յուրաքանչյուր երեխայի զարգացմանը։ Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշումը, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդունակություն, ինչպես նաև գեղեցիկի գաղափարով առաջնորդվելու ցանկություն և կորողություն։ Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց՝ ուղղված ստեղծագործելու ընդունակ անձնավորության ձևավորմանը։

Նախադպրոցական դաստիարակության և ուսուցման սկզբունքային մոտեցումները տարբեր ժամանակաշրջանում այլ են եղել։

1920թ. Ն. Կ. Կրուպսկայայի կողմից դաստիարակության I հայեցակարգն է մշակվել։ Այն ուղղված է եղել կոմունիստական գաղափարներով օժտված, ներդաշնակ զարգացած անձնավորության ձևավորմանը։

1950-ական թվականներին մշակվում են ուսուցման և դաստիարակության նոր ծրագրեր, որոնք հիմնականում ուղղվում էին երեխաների ինտելեկտուալ զարգացմանը։

1959թ. հաստատված ուսումնակարգապահական ոճը սահմանափակում է երեխաների ազատությունն ու ինքնուրույնությունը: Չեն խրախուսվում նախաձեռնողականությունն ու սեփական կարծիք ունենալը և արտահայտվելը: Շեշտադրվում է երեխայի մտավոր զրագացումը և «օրինակելի» վարքագիծը: Այս ժամանակաշրջանում մեծահասկաները արվեստի գործերն օգտագործում էին երեխաներին գիտելիքներով օժտելու, երեխայի ուշադրությունը անցանկալի պահվածքից շեղելու համար, այն թուլացնում էր արվեստի հումանիստական ընդհանուր զարգացման էությունը: Արվեստի գործունեության հիմնական նպատակը առաջադրանքը լսել ու հիշել, այն որոշակի հաջորդականությամբ կատարել, պահպանել գործիքների և նյութերի հետ աշխատելու կարգը: Ծրագիրը ներառում էր առարկայական և սյուժետային նկարչություն, որտեղ դաստիարակը պետք է սովորեցնի տարբերակել և ճիշտ օգտագործել գույները և երանգները, զարգացնել ներկերի հետ աշխատելու հմտությունները, սովորել ներկերը խառնել, նոր երանգներ ստանալ, ընտրել համապատասխան սյուժե, թղթե ձևաչափ, գծագրել առարակները, երևույթները, դասավորությունը պահպանել:

Երեխաները պետք է հետևեին և պահպանեին մի շարք կանոններ.

- Ճիշտ նստել գրասեղանի մոտ:
- Ճիշտ պահել թուղթն ու մատիտը:
- Ազատ աշխատել մատիտով՝ գծեր գծել ճիշտ ուղղություններով՝ առանց թուղթը թեքելու:
- Ճիշտ աշխատել ջրաներկով և գուաշով:
- Ճիշտ խառնել ներկերը և դրանցով հավասարաչափ ծածկել ցանկալի մակերեսը՝ առանց մակերեսից այն կողմ անցնելու:

20-րդ դարի 89-ական թվականներին շրջադարձային փոփոխությունները պահանջեցին դաստիարակության գործող հայեցակարգի սկզբունքային վերանայում: Անհատակողմնորոշիչ դաստիարակությունն էր սկզբունքային:

Կրթական նոր ծրագրեր մշակվեցին արտասահմանյան հայտնի հոգեբան, մանկավարժների կողմից:

Ամենահայտնի ծրագրերն էին.

- «Ծիածան», «Զարգացում», «Մանկություն», «Ակունքներ», «Ոսկե բանալի», «Տրիզ», «Քայլ առ քայլ»:

Դիտարկենք ոչ ավանդական նկարչության զարգացումը վերոնշյալ ծրագրերի կոնտեքստում:

«Ծիածան» (Տ. Ն. Դորոնով) ծրագրի նպատակն էր ամրապնդել երեխաների հոգեկան առողջությունը, ապահովել երջանիկ և (բովանդակալից) հագեցած մանկություն: Նախադպրոցականներին սովորեցնում էին նկարել մատիտներով և ներկերով՝ հիմնվելով ժողովրդական քանդակի հետ ծանոթության վրա: Ակնհայտ է, որ երեխայի ցանկության և պատրաստակամության բացակայության դեպքում դաստիարակի ջանքերը ապարդյուն կլինեին: Ուստի, ահռելի դեր ունեցավ ոչ ավանդական նկարչության տեխնիկայի կիրառումը արվեստում՝ երեխայի ընտրության ազատության ապահովում՝ առաջարկվող մեթոդի շրջանակներում:

Այսպիսով, եթե նախադպրոցականները պետք է շրջան նկարեին, ապա նրանց առաջարկվում էին շրջանաձև պատկերներ՝ լոլիկ, անիվ, օգտագործվում էին ոչ ավանդական նկարչության մեթոդները:

«Մանկություն» (Վ. Բյոգինովա) ծրագիրը պարունակում է հագեցած զարգացնող նյութեր՝ ուղղված երեխայի ճանաչողական գործընթացների զարգացմանը: «Մանկություն» ծրագրում ակտիվորեն կիրառվում են մանկության ոչ ավանդական մեթոդները:

Ծրագիրը ներառում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք զարգացմանը համապատասխան պայմանների ստեղծում:

Անհատակողմնորոշիչ դաստիարակության ամենակարևոր սկզբունքներից էր զարգացնող միջավայրի ապահովումը:

Այսպիսով վերոթվարկված ծրագրերը շրջադարձային եղան երեխաների դաստիարակության և կրթության մոտեցումների գործընթացում:

Նախադպրոցական դաստիարակության հայեցակարգը վերանայում է նախադպրոցականի ուսուցման գործընթացի կազմակերպման եղանակները:

Ուսուցման ավանդական մեթոդին փոխարինելու է գալիս ակտիվ ուսուցման տարբերակը, որի նպատակը ոչ թե գիտելիքների ուղղակի փոխնցումն է, այլև

աշխարհաճանաչման, ինքնուրույնության խթանումը իմացության փորձին և հիմնական եղանակներին ծանոթացնելու միջոցով:

Նախադպրոցականի ուսուցման նշված եղանակները կոչված են ձևավորելու ինքնուրույն աշխարհընկալման կարողություններ՝ իմացության հանդեպ հետաքրքրություն և իմացական կուլտուրա, գործունեության նպատակաուղղվածության և այլընտրանքային որոշումներ կայացնելու ընդունակություն:

Հայեցակարգում արժևորվում է երեխայի ներքին հոգևոր աշխարհի հարստացման գործընթացն արվեստի բոլոր տեսակների լայն օգտագործմամբ, կարևորվում է գեղարվեստա-գեղագիտական դաստիարակությունը: Երեխային տրվում է ազատ ընտրելու և ինքնուրույն կողմնորոշվելու իրավունք, արգելվում է որևէ ճնշում և պարտադրանք՝ հաշվի առնելով երեխայի հետաքրքրություններն ու պահանջմունքները (մշակված Պետրովսկու կողմից):

«Քայլ առ քայլ» ամերիկյան ծրագրի նպատակն է երեխայի ազատության և ինքնուրույնության ապահովումը, նրա սոցիալական հմտությունների ձևավորումը:

ԽԱՂ-ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԻԿՆԵՐՈՎ

„Աշնանային ծառ„

Տարիքը՝ 3-4 տարեկան, կրտսեր II խումբ

Օգտագործվող նյութերն ու միջոցներն են՝

- Գուաշով լցված թաս կամ ջրաներկ
- Սպիտակ A4 ֆորմատի թուղթ
- Թաց անձեռոցիկ
- Նմուշ-օրինակ

Նպատակ՝

- Զարգացնել ստեղծագործական երևակայությունը
- Ծանոթացնել ոչ ավանդական նկարչության այս տեխնիկային

Ընթացք՝

- Նախապես թրջած ջրաներկի մեջ իջեցնել մատիկները (երեխաներն ազատ են մատիկների ընտրության մեջ, կարող են աշխատել ցանկացած մատիկով) և ծառի տերևներ նկարել: Յուրքանչյուր գույնով աշխատելուց առաջ մաքրել մատիկները թաց անձեռոցիկով:

  Աշխատանքից հետո լվանալ ձեռքերը:

  Աշխատանքի վերջնական տեսքը՝՝Աշնանային ծառ՞՝ գունավոր տերևներ՝ կարմիր, կանաչ, դեղին, գազարագույն, շագանակագույն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարական զարգացման ուղին ընտրած հասարակությանը պետք են ազատ և ինքնուրույն, նախաձեռնող և ստեղծագործաբար մտածող քաղաքացիներ:

Ազատ և ինքնուրույն անձի ձևավորումը պետք է սկսել դեռ վաղ տարիքից: Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունը խաղն է: Խաղում երեխան ինքնարտահայտվում է, զարգանում է հոգեկան մի շարք գործընթացներ, հարստանում է երեխայի հուզա-զգացմունքային ոլորտը:

Ինքնուրույն ընտրելով գործունեությունը, լինի այն խաղ, թե նկարչություն՝ երեխան հաճույք է ստանում գործընթացից ու արդյունքից: Այդ գործունեությունում էլ զարգանում են մի շարք հոգեկան գործընթացներ՝ ստեղծագործական երևակայություն, մտածողություն, հիշողություն, ուշադրություն, խոսք և այլն, ինչի արդյունքում էլ երեխան հեշտությամբ անցում է կատարում զարգացման հաջորդ փուլ:

Կերպարվեստային գործունեությունը, հատկապես՝ ոչ ավանդական նկարչությունը, հնարավորություն է տալիս երեխային ինքնարտահայտվել, ձևավորում է նախձեռնողականություն և ինքնուրույնություն:

Այլընտրանքային նկարչությունը, ինչպես անդրադարձա աշխատանքումս, ոչ միայն ստեղծում է դրական հույզեր, ոչ միայն նկարչություն է, այլև կարևոր գործունեություն յուրաքանչյուր երեխայի զարգացման համար:

Յուրաքանչյուր մեծահասակ՝ թե՛ դաստիարակ, թե՛ ծնող պետք է ստեղծի համապատասխան միջավայր երեխայի զարգացման համար: Յուրաքանչյուր մեծահասակ պետք է առաջնորդվի դաստիարակության հետևյալ մեթոդներով

- Յուրաքանչյուր անհատի անկրկնելիության բացահայտում և նրա անհատականության զարգացում:
- Կյանքում ակտիվ դիրքորոշում ունեցող, ստեղծագործող անձնավորության ձևավորում:

Ազատ և ինքնուրույն, նախաձեռնող և ստեղծագործաբար մտածող քաղաքացիք, հուզականորեն կայացած, արտաքին աշխարհին համարժեք արձագանքող ներդաշնակ զարգացած, երջանիկ անհատներ են դառնում:

Կրտսեր II խմբի սաները, մատնանկարչությանը նվիրված, նկարչության պարապմունքի ընթացքում ցուցաբերեցին մեծ հետաքրքրասիրություն և մեծ ոգևորություն ապրեցին՝ և՛ ընթացքից, և՛ արդյունքից:

Այսպիսով, ոչ ավանդական նկարչության պարապմունքի միջոցով խթանեցինք երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ինքնարտահայտմանը և ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ոչ ավանդական նկարչություն / Յ. Ավետիսյան, Գ. Փոթիկյան (Էդիթ Պրինտ, 2020թ.)
- Նախադպրոցական մանկավարժություն Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքան (Երևան, 2005)
- Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր (Երևան, 2011)
- Կերպարվեստի պարապմունքներ կրտսեր I և կրտսեր II խմբերի համար Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Լ. Սարգսյան (Երևան, 2015)
- Հոգեբանության հիմունքներ (Ալբերտ Նալչաջյան (1997թ.))
- Հղում www.interoctive-plus.ru
- «Блог воспитателя Иванищевой Елены» Николаевны` https://eivanicheva.blogspot.com/p/blog-page_8988.html